# «Դուք իրավունք ունեք...»



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

INTERNATIONAL FOUNDATION FOR ELECTORAL SYSTEMS
IFES
25 YEARS

PMMG

Քաղաքացիների մասնակցությունը ինքնակառավարում իրականացնելու գործընթացին















Եթերում է «Տարածաշրջանի ժամին» հաղորդումը: Ունկնդիրներին հիշեցնենք, որ խորհրդարանի որոշմամբ «Տեղական ինքնակառավարման մասին» Վրաստանի օրգանական օրենքին ավելացավ հատուկ գլուխ «Քաղաքացիների մասնակցությունը ինքնակառավարման իրականացմանը», որի հիման վրա էլ սահմանվում են քաղաքացիների իրավունքները՝ մասնակցելու տեղական նշանակության հարցերի լուծմանը եւ վերահսկելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը: Օրենսդրական փոփոխություններին համապատասխան քաղաքացիներին իրավունք է տրվում կատարել Սակրեբուլոյի որոշումների նախաձեռնում՝ պետիցիայի (խնդրագրի) կարգով, ինչպես նաեւ պահանջել սակրեբուլոյի արտահերթ նիստի հրավիրում: Պետիցիա նշանակում է, որ քաղաքացիներն իրավունք ունեն պատրաստելու տեղական որոշումների նախագիծ եւ եթե այս նախագծին աջակցում է մունիցիպալիտետի ընտրողների գոնե մեկ տոկոսը, որոշման նախագիծը ներկայացնել քննարկման:




Բարեւ ձեզ, Աշխեն տատ, կարելի՞ է:
Արի, տղա ջան, ներս արի:
Թոշակի փաստաթղթերի կապակցությամբ եմ եկել, փոքր փոփոխություններ կատարվեցին եւ այժմ փաստաթղթերի վրա ձեր ստորագրությունն է հարկավոր: Եթե կարելի է, այ, այստեղ ստորագրեք:
Հիմա, տղաս, ակնոցներս բերեմ: Տանը հո՞ բոլորը լավ են:
Աշխեն տատիկ, լա՞վ ես: Մտահոգված ես երեւում:
Քաղաք եմ ուզում գնալ, որդիս, թոռներիս եմ ուզում տեսնել: Նրանք էլ չեն կարողանում բարձրանալ այստեղ: Այս ճանապարհի չունենալը մեկս մյուսից հեռացրեց: Հոգնել եմ, տղաս: Տես, ինչ է կատարվում, ողջ գյուղը ոտքի է կանգնել, բայց...
Հա, այս ճանապարհի չունենալը մեզ էլ է մտահոգում, (դադար): Այս կողմը գալու ժամանակ ռադիո էի լսում: «Տարածաշրջանի ժամին» հաղորդումն էր եւ այնտեղ խոսվում էր, որ ինչ-որ նոր օրենքով կարելի է պահանջել փոփոխություններ մտցնել մունիցիպալ իտետի բյուջեում, որպեսզի հնար լինի եւ մեր այս քանդված կենտրոնական ճանապարհը կարգավորելու համար փող հատկացվի...
Տղաս, դա ես էլ լսեցի, բայց ոչինչ չհասկացա, չեմ հասկանում ես այդ տերմինաբանությունը, ինչ անեմ: Այս հասակի կին եմ: Չի կարելի՞ որ այդ չեղած օրենքները գրեն բնակչության համար հասկանալի լեզվով:
Որպեսզի ճանապարհը վերանորոգելու համար փող հատկացվի, փոփոխություն պետք է մտցվի բյուջեում, իսկ այս փոփոխության համար հարկավոր է պետիցիա պատրաստել, հետո ստորագրություններ հավաքել եւ վերջում Սակրեբուլոյին ներկայացնել:


Հա, բայց ճանապարհի նախագիծը եւ ծախսերի հաշվարկը արդեն երկու տարի է պատրաստ է, բայց ու՞ր է ելքը:
Նախագիծ, այո, գոյություն ունի, բայց նախորդ բյուջեում չմտավ:
Ստացվում է, որ ելք չկա, հա՞: Ի՞նչ անենք:
Օրենքում գրված է, որ ճանապարհի ծախսերի հաշվարկը բյուջե մտցնելու համար կարող ենք պետիցիա կազմել եւ Սակրեբուլոյին ներկայացնել: Որպեսզի մեր ճանապարհի վերանորոգմանը փող հատկացվի մունիցիպալիտետի բյուջեն պետք է փոխեն, դրա համար մենք պետք է ակտիվանանք, հետո ստորագրություններ պետք է հավաքենք եւ դիմենք Սակրեբուլոյին: Իսկ Սակրեբուլոն չի կարող այս հարցի քննարկումը կրկին եկող տարվա համար հետաձգել, ինչպես մինչեւ հիմա խոստանում էր մեր գյուղի լիազորը՝ իբր թե ճանապարհի հարցը եկող տարվա բյուջեում անպայման կվճռվի: Թերեւս այս խոստումը այդպես էլ մնաց խոստում: Ուրիշ ելք չկա, մեզ վրա պետք է վերցնենք այս գործը, քանի որ լիազորը առանց մեզ, ինչպես երեւում է, շատ բան չի կարող… եթե մի քանի գյուղ միասին անենք, մեր գործը միասին ավելի մեծ ուժ կունենա: Մեզ մոտ էլ ողջ գյուղը այսպես տանջվում է:
Գնանք լիազորից խնդրենք օգնություն: Արմենն ասաց, որ սամսարցիները (գյուղի անունը) եւ այլ գյուղեր նույնպես այս վիճակում են եւ կարող է համատեղ ուժերով ինչ-որ բան անենք:
Այո, գնանք, փորձենք, այլ ելք կա՞ որ:
Հիմա էլ կգնանք, խոստումներ կտան եւ կշրխկացնեն դուռը:
Ճանապարհի շինարարության պլանի ծախսերի հաշվարկ գոյություն ունի, պատգամավորը ակտիվորեն միացել էր գործին, սակայն չկարողացավ Սակրեբուլոյին համոզել: Ասացին, որ այս փուլում ավելի կարեւոր այլ հարցեր են կարգավորելու եւ ճանապարհ դրեցին: Այսպես չէ՞ր, Տիգրան:
Երբեք չեմ կարողանա պաշտպանել մեր շահերը, եթե ժողովրդի աջակցությունը չունենամ: Այս նոր օրենքի օգնությամբ կարող ենք մեկ անգամ էլ փորձել, սա մեզ համար մեծ շանս է: Այս փուլում ես կարող եմ իրավաբանին խնդրել եւ նա կօգնի նախագիծը եւ փաստաթղթերը կազմելու մեջ, ընդունված բյուջեի տեքստը եւ այլ փաստաթղթերը ես ունեմ, այսօր եւեթ այս փաստաթղթերը կհանձնեմ Գարիկին, հետո էլ կխնդրեմ ծանոթանա դրանց եւ մտածի նախագծի պատրաստման մասին, որին պետք է կցվի անհրաժեշտության հիմնավորման Սակրեբուլոյի որոշումը„ նախագծի հեղինակի եւ Սակրեբուլոյի նիստում նշանակված զեկուցողի ով լինելը, որն իրավունք կունենա զեկուցողի կարգավիճակով խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցել քննարկման գործընթացին Սակրեբուլոյի նիստում:
Մեզ ով կթողնի այնտեղ, լավ եք, էլի…


Ի՞նչ ասել է չեն թողնի: Տեղական ինքնակառավարման մասին օրգանական օրենքի 58.3 պրիմա Հոդվածով ձեզանից ամեն մեկը սեփական կարծիքները և հետաքրքրությունները պաշտպանելու նպատակով նիստին մասնակցելու իրավունք ունի:
Եկեք այսպես անենք, այսօր ևեթ հավաքվենք գյուղի ակումբում: Կազմենք բյուջեում փոփոխության նախագիծը: Արմենը իրենց գյուղացիներին կտեղեկացնի: Մենք մնացած գյուղերին ասենք և բոլորս միասին անենք այս գործը: Թեչէ ուրիշ ճանապարհ չունենք:
Գյուղի ակումբ
Գյուղի ակումբ
Համարեք որ նախագիծը վաղվա համար պատրաստ կլինի, իսկ մինչ այդ չմոռանաք, որ ստորագրությունների գումարը պետք է լինի ընտրողների մեկ տոկոսը , իսկ դրա համար շատ աշխատանք է հարկավոր:
Դա ես վերցնում եմ ինձ վրա, տղաներին կխնդրեմ և բոլոր տները կգնանք և կհավաքենք ստորագրություններ:


Սակրեբուլոյի բանկ
Պետիցիան գրանցեցինք, երեսուն օրվա ընթացքում կպարզվի մեր բախտը, այդ պատճառով հարկավոր է սպասել: Իսկ մինչ այդ մեր պատգամավորը կզբաղվի այլ պատգամավորներին համախոհացնելով:
Երեսուն օր հետո
Հարեւաններ, մինչեւ պատասխանը հայտնելը, կասենք, որ մեծ պայքար տարանք, որ եթե չլիներ գյուղի պատգամավորի անսպառ աշխատանքը, երեւի սրան դեռեւս չարժանանայինք: Շնորհավորում ենք, որոշումն ընդունված է եւ մեր ակտիվության շնորհիվ ամսվա վերջին կսկսվեն շինարարական աշխատանքները եւ ամռանը նոր ճանապարհը կգեղեցկացնի մեր գյուղը:

## Արդյունավետ քաղաքացիական ակտիվություն եւ կողմերի միջեւ համագործակցության ձեւեր




Ի՞նչ անցկացնես: Հարկավոր չի այդ տերմինաբանությունն էլի, մենք հասարակ ժողովուրդ ենք, հասկանու՞մ ես: Շինարարության ժամանակ նրանց կարծիքը ոչ ոք չի հարցրել եւ եթե չեն օգտվելու, այսպիսի թեմային շենք ոչ ոք չի ուզում:
Խոստանում ենք, այս գործն այսպես չենք թողնի, անցկացնենք նիստ: Գիտե՞ք նիստն ինչ է եւ ինչ ուժ ունի:


Է, տղա, եթե ասում ես, ասա, վահ:


Հրապարակային խորհրդատվությունը Արեւմուտքում լայնորեն տարածված եւ հարմարված մեթոդ է: Բոլոր կողմերը, այսինքն բնակչությունը, առաջին հերթին սահմանափակ կարողություններ ունեցող անձինք, լրատվամիջոցները, ձեռներեցները նստում են միասին եւ անց են կացնում մեծ հավաք: Զրուցում են գոյություն ունեցող հիմնախնդիրների շուրջ, այնուհետեւ հիմնախնդիրը լուծելու կոնկրետ ուղիների մասին:


Դա հասկանալի է, բայց հետո՞: Եթե, չնայա՞ծ դրան , ամեն ինչ մաա նու՞յնը: Փուհ:
Սպասիր, այնուհետեւ անվանում են միջոցառումներ: Նմանապես որոշված է ռեսուրսային ապահովումը, այսինքն՝ (համամասնակցությունը) եւ ընդունում են որոշումներ, երբ եւ ինչպես սկսեն այս հիմնախնդրի կարգավորումը: Այս ամենը ձեւակերպում են հուշագրի տեսքով, ստորագրում են եւ սկսվում է դրա իրականացումը:
Ճիշտն ասած, ես այդպիսի բաների չեմ հավատում, սակայն, այո, փորձենք, եթե հայտնվի որեւէ հնարավորություն, պատրաստ ենք ամեն ինչ անել: Իմ եղբոր տղան քարհանք ունի եւ կօգնի շինանյութով, անընդհատ այն է ասում, որ եթե տրանսպորտով որեւէ մեկը օգնի, նյութը այստեղից տարեք:
Տրանսպորտ մենք կտանք:


Այ մարդ, բանվորություն մենք կանենք, դա հիմնախնդիր չէ, մեր արյունն է, այս ժողովրդի համար ամեն ինչ կանենք:
Հին քարի արտադրամասը եթե կվերականգնեք, գոյություն ունեցող հումքից տղաները սալիկներ կպատրաստեն:
Ախալքալաքի կենտրոնական հրապարակ


Հաճելի է, երբ ուշադրություն են դարձնում, քո խնդրանքը հաշվի են առնում եւ օգնում են: Ես կարծում եմ, որ դա նախկինում էլ պետք է տեղի ունենար, սակայն դրա մասին խոսելը իմաստ չունի: Գլխավորն է, որ արվել է եւ դրա համար շնորհակալություն բոլոր մասնակիցներին եւ աջակցողներին:
Հպարտանում եմ, որ ես եւ իմ ընկերները կարողացանք այս ժողովրդին օգնել եւ նրանց դեմքերը գեղեցկացնում է ժպիտը:
Սա դեռ սկիզբն է,
շատ շուտով կավելանան նոր հատուկ ուղեւորական ավտոբուսներ եւ այսուհետեւ բոլոր բնակիչները կկարողանան ուղեւորվել իրենց ցանկալի ուղղությամբ: Ինչ խոսք, ողջ այդ ճանապարհային ծախսը կմարի տեղական մունիցիպալիտետը:

# Քաղաքականապես ակտիվ քաղաքացի




Այսպես, առանց զգուշացնելու կարելի՞ էր դա անել: Կես գյուղին պարտք ունեմ, մթերքը տեղափոխել չեմ կարողանում: Բոլոր հաշիվների վրա ինկասո են դրել: Արտադրանքի վրա կալանք է դրվել: Այսքան աշխատում եմ եւ ամբողջ փողը հարկեր եմ վճարում, գործը վարելու համար կոպեկ չի մնում... բանկիրը այլ հաշվի վրա փոխանցեց փողը, իսկ ես երկու օրով ուշացրի փողը մտցնել, որովհետեւ բանկի հիմնախնդիրն էի կարգավորում: Այս ընթացքում հարկային տեսչությունը առանց դատարանի որոշման եւ առանց նախազգուշացնելու բոլոր իմ հաշիվների վրա ինկասո դրեց եւ ունեցվածքը կալանքի տակ առավ:
Բարեւ, Տոմ:
Դուք ինչի մասին եք մտածում, հանգիստ աշխատում եք եւ կալանք ոչ-ոք չի դնում: Իսկ մենք այս անկառավարելի հարկային օրենսդրության զոհեր դարձանք:
Երեւում է ինչ-որ լուրջ հիմնախնդիր ունեք, երկու տարի է այստեղ եմ ապրում եւ այսպես երբեք չեմ տեսել ձեզ: Ողջույն, բարեկամներ:
Հարկային տեսչությունը՝ թե, ծանուցումը փոստով ուղարկել ենք եւ առաքումը մինչեւ ձեզ հասցնելը եթե ուշացել է, դրա համար մենք պատասխանատվություն չենք կրում:
Հետո՝ դիմեք դատարանին եւ նրանք կպարզեն սուտն ու ճիշտը: Մինչեւ ե՞րբ պետք է լինեք ուրիշից կախված: Միշտ ուզում եք, որ ուրիշը կարգավորի ձեր հիմնախնդիրները: Անընդհատ լացել, կարելի՞ է, այ մարդիկ: Խրոնիկական ռժգոհություն է, սա ի՞նչ նոր կարգ է: Աստված գիտե՞ք ինչ է ասում: Ձեռքներդ շարժեք եւ ճար կլինի: Հասկացա՞ք:


Դեռ ի՞նչ ես տեսել, թիչեր, սա Վրաստան է, գիտե՞ս: Այստեղ ոչ ոք ժողովրդի մասին չի մտածում, ոչ փոքր ձեռնարկատիրոջ եւ ոչ էլ արդյունաբերության մասին, առավել եւս նրանց աջակցող օրենքներ գրելու մասին:
Եթե այդպես է, մի ընտրեք նրան, ով այդպիսին է եւ ձայնը տվեք նրան, ում սիրտը ձեզ համար կցավի:
Ի՞նչ է նշանակում, պատժվում եք, թիչեր:
Դրանց ընդհանրապես ձայն ով է տալիս որ, իրենք են ընտրում իրենց գլուխները...Առաջին եւ վերջին անգամ ընտրությունների եղել եմ տասնինը տարեկան հասակում, այն էլ հետաքրքրությունից ելնելով, ուզում էի սեփական աչքով տեսնել ինչպես են անցկացվում ընտրությունները:
Ապրես, բոլորդ եթե այդպես եք վարվում, ավելիին եք արժանի, դրա համար էլ պատժվում եք:
Ինչ է նշանակում եւ ընտրությունների չեք գնում, հո այդպես է, այն դեպքում, երբ գոյություն ունի միակ քաղաքակիրթ ճանապարհը ընտրությունները: Ընտրությունները շանս է որոշելու ձեր ճակատագիրը, իսկ դուք ձեր դիրքորոշումը, վստահությունը կամ անվստահությունը չեք ամրագրում: Փոխարենը՝ նրանց կողմից կատարված քայլերն եք բողոքարկում եւ վրդովված ման եք գալիս: Վեր կացեք գնացեք ընտրությունների, դրանով կկարողանաք կեղծման մակարդակը նվազագույնի հասցնել: Եթե ողջ բնակչությունը ամրագրի իր կարծիքը, ընդհանրապես արմատախիլ կլինի այս անօրինությունը: Դրանից հետո կկարողանաք ընտրել նրան, ով ձեր մասին իսկապես հոգ կտանի:
Տոմ, ճիշտն ասած, ես մինչեւ օրս չգիտեմ ընտրություններն ինչ է, գիտե՞ս, ինչու: Չեմ հավատում եւ այդ պատճառով: Ոչ վստահություն ունեմ եւ ոչ էլ համակրանք, օրինակ, փողկապավորների նկատմամբ:
Գիտե՞ս, ինչ կասեմ, Գարիկ: Եթե երբեք չես գնա ընտրությունների, միշտ այսպես կլինի եւ երբեք գոհ չեք լինի: Երբ մարդը չի գնում ընտրությունների եւ պարզապես սպասում է, որ ուրիշը օգնի իրեն կամ նրա օգտին որեւէ բան անեն, դա սոսկ լավ ֆիլմի կադրեր են: Ես խորհուրդ եմ տալիս, որ հաջորդ ընտրություններին, որոնք շատ շուտով են պլանավորված, գնաս եւ քո կարծիքը ամրագրես, որովհետեւ դրանով դու չորս տարով որոշում ես քո բախտը, հասկացա՞ր: Միաժամանակ կարեւոր է ընտրություններին մասնակցել, որովհետեւ դուք արդեն կարող եք դիմել ձեր իսկ որոշմամբ ընտրված մեծամասնական պատգամավորին: Մեծամասնականը պարտավոր է ձեզ հետ հանդիպելուց եւ զրուցելուց հետո , ձեր կողմից հարորդած հիմնախնդիրները պաշտպանել եւ ներկայացնել խորհրդարանում:
Լավ եք, էլի, մարդիկ, ինչ մեծամասնական, ինչ ընտրություններ, չե՞ք տեսնում ամբողջ գյուղը պատնեշված է, ֆերմաների վրա կողպեք է դրված: Համապատասխանաբար ֆերմերները գյուղացիներին փող չեն վճարում: Վարորդները վառելանյութ չունեն, որպեսզի տրանսպորտը պահեստ տանեն եւ մթերքները դատարկեն:
Ես էլ ճիշտ այդտեղ եմ: Երբ մեծամասնականը ձեր կողմից կլինի ]ընտրված եւ ոչ թե նշանակված, նա պարտավոր է պաշտպանել ձեր ]շահերը: Բացի դրանից ունեք օրենքով շնորհված իրավունք, որ ]միանգամայն ճշմարտացիորեն կարող եք զգուշացնել նրան եւ ]պահանջեք ձեր օրինական շահերի պաշտպանություն:
Բավական է, էլի: Որտեղի՞ց սկսեցինք եւ ուր գնացինք: Տոմ, մենք այժմ այլ հիմնախնդիրներ ունենք: Շնորհակալություն, որ օգնում ես, քո երկրի փորձը շատ կարեւոր է մեզ համար:


Տոմ, դուք մանկավարժ մարդ եք, ինձ համար բոլոր մանկավարժները հարգելի մարդիկ են: Ձեր հայրենիքը ժողովրդավարության եւ նման թեմաների բնագավառում մեծ փորձ ունեցող երկիր է: Այ, խաղում էի եւ միեւնույն ժամանակ լսում էի: Ինձ, գիտեք, ինչ է հետաքրքրում: Ամեն օր հեռուստացույցով խոսում են այն մասին,որ Սակրեբուլոն ընդունեց որոշում, խորհրդարանը ընդունեց որոշում եւ ինչի է հարկավոր այս բառերի ռախա- ռուխին: Կարելի է մեկ անուն տալ այս ամենին եւ կհանգստանանք մենք էլ եւ լրագրողներն էլ, չէ՞:
Ոչ, Պետրոս, այդպես չի ստացվի, որովհետեւ դրանց միջեւ մեծ տարբերություն է: Խորհրդարանը մարմին է, որն ընդունում է Վրաստանի Սահմանադրությունը եւ օրենքները: Խորհրդարանի գերակայությունն է օրենսդիր գործունեությունը, երկրի ներքին եւ արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների սահմանումը: Վրաստանի Սահմանադրությամբ նախատեսված է պաշտոնյա անձանց իմպիչմենտի կարգով պաշտոնից հեռացնելը: Պետական բյուջեի հաստատումը, օրենքի ընդունումը եւ դրա կատարումը, այսինքն՝ ընդհանուր պետական նշանակության, սակայն ոչ տեղայնացած բնույթի հարցերի լուծում: Իսկ Սակրեբուլոն իրավասու է հաստատել միավորի բյուջեն, որոշել կամ վերացնել տեղական վճարները կամ հարկը: Նույնպես նրա գերակայության մեջ է մտնում օրենքով նախատեսված շրջանակներում հարկերի եւ վճարների չափի սահմանումը:
Ճիշտ է, ես շատ հարցերում համաձայն եմ ձեզ հետ: Բայց, գիտե՞ք, ինչ կասեմ: Ինձ նմանը այս աշխարհում շատ է: Բոլորը չէ, որ օրենսդրական հարցերում գլուխ են հանում: Ոչ էլ հարկային օրենսդրությունում մտցված փոփոխությունների մասին որեւէ բան են բացատրում: Այսպես կտուգանեն, ոչ էլ զգուշացնում են: Երբ սկսում ես պատճառը որոնել, մոլորեցնում են այս տերմիններով: Ի՞նչ անենք, մենք գիտենք՝ չգիտենք այսքան բան, հետո էլ իրավաբանական կրթություն չունեցող մարդիկ ենք: Շարունակեն ուղարկել տուգանքներ եւ մեր հաշիվների վրա կալանք դնե՞ն: Պտտեցնում են մի շենքից մյուսը, սա տեղական կառավարման իրավասության մեջ չի մտնում, գնացեք կենտրոնականը եւ մնում ենք այսպես օդում լվացքի նման կախված:
Վահ, ե՞րբ է փրկություն լինելու, ես չգիտեմ:
Միրանուշ, այն ինչի մասին դու ասում ես, հարկային օրենսդրությամբ է կարգավորվում եւ չի հանդիսանում տեղական իշխանության կարգավորման առարկա: Դրանում ես էլ համաձայն եմ, որ շատ բան դեռեւս կարգավորվելու է: Երբ նոր էի ժամանել, ման էի գալիս տան փաստաթղթերի ձեւակերպման հարցով, միշտ այդ հիմնախնդիրն ունեի, մեկ կառուցվածքից ուղարկում էին մյուսը: Վերջում վերկացա եւ պատգամավորին խնդրեցի, նա ցուցաբերեց լոբբիացում իմ հարցով եւ օգնեց: Դուք էլ վերկացեք եւ անհանգստացրեք, նրա պարտականությունն է ձեր հիմնախնդիրները մինչեւ խորհրդարան հասցնելը:
Իսկական թիչեր եք, պարոն Տոմ, էլի:
Չգիտեմ ինչ կկատարվի կամ ինչպես կընթանա այս գործը, միայն հայտնի է, որ պետք է գործենք: Մեծամասնականի անունով կգրեմ դիմում , որով կպահանջեմ, որ պատգամավորը հարցը բարձրացնի խորհրդարանում, հարկային օրենսդրության համապատասխան Հոդվածը կատարելագործելու նպատակով, որպեսզի այս Հոդվածը հեշտ ըմբռնելի եւ հասկանալի դառնա ինձ համար: Սակայն, Տոմ, եթե արդյունք էլի չլինի, այդ դեպքում, ի՞նչ անենք:


Դիմումի պատասխանը մեկ ամիս սպասեք, որովհետեւ այս ժամանակաշրջանն է հարցի քննարկման ժամկետը: Հետո վեր կացեք եւ խորհրդարանի նախագահին դիմեք եւ նշեք, որ մեծամասնականը չի պաշտպանում ձեր շահերը: Անհրաժեշտության դեպքում գործին խառնեք լրատվամիջոցներին, դիմեք հեղինակավոր ոչկառավարական կազմակերպություններին:
Մեր գնալու ժամանակն է, Տոմ, խորհուրդների համար շնորհակալություն: Երեկոյան կանցկենամ, գրածս դիմումը ցույց կտամ: Կտեսնես, որքանով պարզ եմ ձեւակերպել իմ պահանջը:
Լավ, կսպասեմ:

# Քաղաքացիական ինտեգրում, նորույթներ եւ հիմնախնդիրներ




Որդիս,այ, լսում եմ եւ զարմանում եմ, որտեղից ես իմանում այսքան սուտ լրատվություն: Կամ ինչու ես ասում այն, ինչ հաստատ չգիտես:
Ինչ ասել է՝ չգիտեմ: Գյուղում բոլորն են խոսում այս մասին, իմ հորեղբոր տղայի հարեւանի մայրը անձամբ է ներկա եղել, երբ քաղաքում հայերեն խոսող հայերին ծաղրել են եւ այսպես են ասել գնացեք ձեր գյուղը:
Չես կարծում, որ այդ քո հորեղբոր որդու հարեւանի մայրը հրահրող է:
Ճիշտ է, ամբողջ օրը այստեղ նստած եմ, բայց այս ամսագիր-թերթերին գլուխս կախած՝ ամեն ինչ մանրամասն գիտեմ, երկրում գոյություն ունեցող կրոնական, ազգային, կրթական եւ քաղաքական լուրերը: Ուզում եմ ասել, իմ լավ, որ ոչինչ խուճապային տեղի չի ունենում... եւ այն, ինչ այսպես պատմում են իբր բարի ցանկացողները,ես համաձայն եմ Տիգրանի հետ, երեւի դրանք հրահրիչներ են:
Ողջույն, տղաներ, ինչպե՞ս եք: Ու՞ր եք կորել, չեք երեւում, այ, ճիշտ այսօր մտադիր էի ձեզ զանգահարել: Դպրոցը ավարտելու երկու տարվա հոբելյանը չնշե՞նք: Երեկ չէ առաջին օրը աղջիկները զանգահարեցին եւ ասացին, որ խնջույքի համար բոլորը համաձայն են եւ մեզ են սպասում:Եկեք այսօր ինձ մոտ՝ խոսենք:
POST
Չգիտեմ ի՞նչ ասեմ, ծնողներիս եմ օգնում, ամբողջ օրը դաշտում աշխատում եմ, երեկոյան այնպես եմ հոգնում, գալիս եմ տուն ու անմիջապես քնում եմ: Իսկ սա քաղաք է գնում ուրիշներին իրեն ձնշել տալու:
Ի՞նչ է նշանակում իրեն ձնշել տալու:
Ինչ ու այն, որ Թբիլիսիում է հանձնել եւ մտադիր է սովորել ու տեղափոխվում է բնակվելու:


Վահ, շնորհավորում եմ, Տիգրան, ինչ լավ է: Հավանու՞մ ես: Ես էլ էի ուզում Թբիլիսիում սովորել, բայց միավորներս չբավարարեցին եւ շրջանի մասնաճյուղում ընդունվեցի: Էրիկ, ինչ ես տրտնջում, այս մարդուց էլ ինչ ես ուզում:
Ինչ ու գնում է անծանոթ քաղաք, որտեղ այլ կրոնի մարդիկ են ապրում, որտեղ այլ լեզվով են խոսում եւ դրանց կողմից միշտ արհամարհված կլինի:
Ինչե՞ր ես խոսում, որտեղից ես բերում այս հիմարությունը: Դու ինչ ես կարծում, այնտեղ ուրիշ տեսակի մարդիկ են, որովհետեւ կրոնը, լեզուն եւ մշակույթը ուրիշ ունեն: Գիտես ինչ կասեմ, ամեն մարդ իրավունք ունի ազատ կերպով եւ առանց որեւէ միջամտության օգտվել իր փոքրամասնության լեզվից բանավոր թե գրավոր, մասնավոր, թե հրապարակայնորեն եւ մի ջնարիր ինչ-որ բաներ, լավ:
– Ապրես, տղաս, ես էլ էի ուզում դա ասել, ուրախացա, որ երիտասարդներդ այդպես լավ եք մտածում, լավ եք ինքնագիտակցում ժամանակակից կյանքում: Քո ընկերներին լսելի դառնալու համար այն կասեմ, որ ազգային փոքրամասնությունների վրացական հասարակությունում ինտեգրման անպայման նախապայման է ներկայացնում վրաց լեզվի լավ իմացությունը: Այդ պատճառով պետությունը պետք է հոգա, որ Վրաստանի բոլոր մասերում գոյություն ունեցող կրթական հիմնարկությունում ձեռնարկվեն միջոցներ վրաց լեզվի պատշաճ ուսուցման համար:
POST
Այդ ամենը հասկանալի է եւ հասկանում եմ, սակայն կրոնը: Կրոնը ինչ անենք, մենք հո ունենք եւ հավատում ենք մեր կրոնին:
Էրիկ, տղաս, դու երեւի ի տարբերություն տղաների, կարդալ ալարում ես, թեչէ կիմանայիր, որ փոքրամասնությանը պատկանող անձը ունի դավանանքի կամ հավատքի երկրպագության իրավունք:
Լավ, քանի որ բոլորդ իմ դեմ եք, ապա այն մասին ինչ կպատասխանեք, որ մեր լեզվով կրթություն ստանալը մնաց առանց օրինականացման եւ ուշադրությունից դուրս:
Լավ էլի, Էրիկ, ինչ սկսեցիր քո հարեւանի հորեղբոր որդու մոր նման խոսել: Դու էլ լավ գիտես, որ մենք ապահովված ենք ամեն մակարդակով կրթություն ստանալու հավասար հնարավորություններով: Պետությունը հոգում է տեղական դպրոցների ուսումնական ծրագրերում ազգային փոքրամասնությունների լեզուն մտցնել: Տպագրվում են տարբեր ամսագիր-լրագրեր: Պետությունը հոգում է, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք չզգան խտրականություն: Նույնպես պետությունը հոգում է բյուջետային ֆինանսավորման վրա գտնվող լրատվական միջոցների եթերում ազգային փոքրամասնությունների լեզվով ծրագրերի թողարկումը:
POS


POST
Սեդա մորաքույր, ճիշտ է, Էրիկը մի շարք պատճառներով պետությունից նեղացած է եւ դա հասկանալի է, բայց, գիտեք, ինչ է հետաքրքրում: Մեր ժողովրդի հասարակական քաղաքական իրավունքների եւ ինքնադրսեւորման մասին թե որեւէ բան գիտե՞ք:
Ցավոք, ես չգիտեմ ինչի համար է նեղացած Էրիկը, սակայն այն ինչ մենք այստեղ կարդում ենք եւ ինչի էլ հավատում եմ, այն էլ կասեմ: Ամեն մարդ ունի իրավունք մասնակցելու մշակութային, սոցիալ-տնտեսական կամ հասարակական-քաղաքական կյանքին: Իրավունք ունենք հիմնադրելու ոչկառավարական կազմակերպություններ, միավորումներ եւ միություններ ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակով: Նույնպես կարող ենք մասնակցել քաղաքական կյանքին եւ ] քվեարկել ինչպես տեղական, այնպես էլ կենտրոնական իշխանության մարմիններում:
Դուք կարծեմ իմ դեմ պայմանավորվել եք բոլորդ, հա՞:
Էրիկ, ոչ թե պայմանավորվել ենք քո դեմ, այլ խոսքը բերեց եւ զրույցին միացանք, հո՞ պետք է գիտենաս եւ գիտենանք ինչ է կատարվում մեր երկրում, մեր շրջապատում: Այ, որ չես հետաքրքրվում եւ այսպես բանավոր հավատում ես ուրիշներին, դրա համար էլ մոլորության մեջ մտցրեց քեզ քո հորեղբորորդու հարեւանի մայրը, որին, համոզված եմ, նույնպես օտար, ոչճիշտ տեղեկատվություն ունեցող մարդիկ են մտցրել մոլորության մեջ: Դու ոչ թե նրա համար պետք է լինես նեղացած պետության վրա, որ բարձրագույն չես կարողացել հանձնել, այլ, ընդհակառակն շատ պետք է պարապես, որպեսզի սովորես այն, ինչ բոլորից ] շատ ես ուզում եւ հետագայում հարկավոր լինես քո ժողովրդին եւ երկրին, հասկացար:


Ես նեղացած չեմ, պարզապես ինչ ժողովուրդն է ասում, այն եմ ասում:
Էրիկ, որդիս, հավատա, ժողովուրդը հաճախ սխալվում է, այդ պատճառով սեփական գլուխդ մոլորության մեջ չմտցնելու համար, մշտապես պետք է լինես ընդգրկված քո երկրի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործերում եւ միշտ պետք է հետեւես տեղեկատվությանը: Դա քեզ էլ հարկավոր կլինի եւ քո երկրին էլ: Իսկ կրթված եւ կարդացած մարդը մոլորության մեջ մտնելու պակաս շանս ունի: Վրաստանում հանրային ծառայությունը հավասարապես մատչելի է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար:
Տղաներ, այս անգամ առանց ինձ խնջույք արեք, խոստանում եմ, շուտով կգամ եւ հետո բոլորս միասին կտոնենք նաեւ Էրիկի ընդունվելը...Մեղա մորաքույր, շատ շնորհակալություն նման հետաքրքիր զրույցի համար:
Մեղան փռում է թերթերը, տղաներն էլ ցրվում են: Ռուսլանը գնում է եւ մինչեւ Էրիկն էլ դուրս կգնա, Մեղա մորաքույրը նրանից մի փոքր հեռացած Էրիկին կանչում է:
Էրիկ, տղաս, եկ, օգնիր դուռը փակելու:
POST
Էրիկ, տես, չամաչես, հա: Գիտցիր եթե որեւէ բան չես հասկանա, եկ ինձ մոտ, ամեն ինչ կբացատրեմ եւ կսովորեցնեմ ինչ հարկավոր է: Այդ մասին սիրտդ մի կոտրիր, եկող տարի դու էլ կընդունվես: